

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 37/12

ք.Երևան

29 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանը հայտնել է, որ շուրջ վեց տարի աշխատելով հարկային դաշտում, որևէ խախտում չի ունեցել: Այս տարի խնդիր է առաջացել համակարգչի հետ կապված, որպեսզի անցնի 5 տոկոսի: Նա դիմել է հարկային բաժնի աշխատակցին, ով իրեն հայտնել է, որ դիմում ներկայացնելու ժամկետը երկարացվել է մինչև մայիս ամիսը: Սակայն տեղեկատվությունը սխալ էր, որի հետևանքով նա հարկվում է 20 տոկոսով: Այդ պատճառով Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանն իր գործող բիզնեսի աշխատանքը դադարեցրել է:

Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանը հայտնում է նաև, որ իր բիզնեսը փոքր սպորտզալ է, որը գտնվում է Նոր-Նորքի Գայի 13/1 հասցեում: Նա դիմել է էրեբունու հարկային տեսչություն, սակայն իրեն պատասխանել են, որ չեն կարող օգնել:

Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանը խնդրում է թույլ տալ համարվել շրջանառության հարկ վճարող, քանի որ այդ աշխատանքով պահում է իր ընտանիքը (երկու անչափահաս երեխաներին և 1-ին կարգի հաշմանդամ մորը):

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 18.04.2013թ.:

Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանը զբաղվում է սպորտային ակումբի գործունեությամբ:

Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որի հետևանքով նա համարվել է ԱԱՀ վճարող:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնար-

կատրերը և նուրարները (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նուրար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանի կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Չնայած այն հանգամանքին, որ բողոքաբերը պնդում է, որ հարկային աշխատակցի կողմից սխալ տեղեկատվության տրամադրման հետևանքով է, որ իր կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու հայտարարությունը, այնուամենայնիվ, Հանձնաժողովը հավաստի չի համարում տվյալ պնդումը, քանի որ ոչ ներկայացված դիմում-բողոքում, ոչ էլ նիստի ժամանակ անհատ ձեռնարկատերը չներկայացրեց որևէ հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ հարկային մարմնի աշխատակցի որևէ գործողության կամ անգործության հետևանքով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացվելու պատճառների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, ներկայացված դիմում-բողոքում չի ներկայացվել այլ հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանը 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Ռաֆայել Ամրաքյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ. ՄԱՇԱԴՅԱՆ